ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻԼՎԻ ԷՅ ՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Տերտերասարի ոսկու հանքավայրում պաշարաների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ առաջին հանրային քննարկում

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Լիճք *28.04.2025*

2024թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՍԻԼՎԻ ԷՅ ՋԻ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում՝ ՀՀ Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրում պաշարաների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

Քննարկումը վարում էր Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Անտոնյանը, ներկա էին «ՍԻԼՎԻ ԷՅ ՋԻ» ՍՊԸ-ի սեփականատեր և տնօրեն Ս. Համբարձումյանը, ՇՄԱԳ նախագծող, բնապահպանական խորհրդատու Զ.Զուռնաչյանը, Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Հ.Հովհաննիսյանը և համայնքի բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով և լուսանկարները կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Անտոնյանը:

Այնուհետև ներկայացրեց հանրային քննարկումը նախաձեռնող կողմին և խոսքը փոխանցեց Զարուհի Զուռնաչյանին:

Զ.Զուռնաչյանը ողջունեց ներկաներին և տեղեկացրեց, որ հանրային քննարկումը կազմակերպվել և իրականացվում է համաձայն ՀՀ Կառավարության՝ 2024թվականի 2343-Ն որոշման դրույթներին համապատասխան, ինչի հիման վրա կատարվել է պատշաճ ծանուցում, հայտարարությունը տպվել է նաև «Առավոտ» օրաթերթում:

Զ. Զուռնաչյանը մեջբերեց, որ ընկերությունը նախատեսում է Տերտերասարի ոսկու հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի՝ մետաղական հանքավայրի պաշարները հաստատված են և շահագործվել են կամ հաստատումը տեղի է ունեցել 10 տարի վաղեմության շրջանակներում, ապա պետք է նոր շահագործման նպատակով իրականացվի

տվյալ հանքավայրի պաշարների վերագնահատում: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննություն՝ ստանալ դրական եզրակացություն, ապա երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ նախատեսվող աշխատանքները ենթակա են ՇՄԱԳ փորձաքննության, ինչի համար էլ կազմակերպվել և իրականացվում է լսումը: Ամբողջ փորձաքննական գործընթացի համար իրականացվելու են 2 հանրային քննարկումներ.

- առաջինը՝ համայնքի և ավագանու նախնական համաձայնություն տալու դեպքում ընկերությունը կսկսի իր նախագծային աշխատանքները, ապա աշխատանքների ողջ փաթեթը կներկայացվի լիազոր մարմնին՝ երկրաբանական ուսումնասիրությունների թույլտվություն ստանալու համար:
- երկրորդը՝ կիրականացվի նախարարության հետ, որի արդյունքում կտրամադրվի պետական փորձաքննական եզրակացություն:

Զ.Զուռնաչյանը հավելեց, որ այսօրվա հանրային քննարկումը (առաջին փուլ) նվիրված է հանքավայրի հնարավոր ազդեցությունների նախնական գնահատմանը, մտադրություններին: Նախագիծը իրականացվելուց հետո մանրամասն կներկայացվեն ողջ ծավալային գնահատումները, երկրաբանական ուսումնասիրության ուղղվածությունը, իրականացման եղանակները և այլն:

Համաձայն ներկայացված նախագծի՝ ուսումնասիրությունը տեղի է ունենալու հորատման զուգակցմամբ, իրականացվելու են նմուշարկումներ, երկրաբանական փաստագրման աշխատանքներ, արդյունքում կկազմվի պաշարների գնահատման հաշվետվություն և կներկայացվի լիազոր մարմնին:

Այնուհետև սկսվեց հարցուպատասխան.

1.«Իրավատեր կապանցիներ» բնապահպանական հասարակական կազմակերպության անդամ Ա. Գևորգյանը հետաքրքվեց, թե որ ընկերության կողմից է իրականացվելու ՇՄԱԳ հետազոտությունը, ինչ գործողություններ է նախատեսում կատարել ընկերությունը փոփոխությունների ենթարկված ռելիեֆների վերականգնման, արոտավայրերի վնասի չափի նվազեցման, անտառածածկ միջավայրի վերականգնման համար:

Ի պատասխան՝ Զ.Զուռնաչյանը նշեց, որ «Լիլիթ Զուռնաչյան ԱՁ» կազմակերպությունն է իրականացնելու ՇՄԱԳ հաշվետվության կազմումը: Ինչ վերաբերում է ռելիեֆներին՝ հանքավայրը ստորգետնյա է, ռելիեֆի ակնկալվող փոփոխություններ չեն լինելու, միայն աննշան փոփոխություն կնկատվի փոքրիկ արտադրական հրապարակում՝ շահագործման դեպքում: Ստորգետնյա

հանքավայրում հորիզոնների միջև շտրեֆների անցկացումը և հորատանցքերի ծավալները չնչին են լինելու:

2.Երկրաբան Ռ.Հովհաննիսյանը մեջբերեց Քաջարանի հանքավայրի օրինակը, չցանկանալով տեսնել նման հետևանքներ նաև Տերտերասարում:

Ս.Համբարձումյանը նշեց, որ իր գործունեության ընթացքում միայն հանքաքար է դուրս բերվել, ինչպես նաև մեջբերեց, որ ժամանակին համընթաց՝ նոր տեխնոլոգիաներ և սարքավորումներ են կիրառվելու՝ ռիսկերը նվազեցնելու համար:

3.Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Բ.Զաքարյանը հավելեց, որ մեր երկրում կարևոր է հանքաարդյունաբերությունը՝ տնտեսապես զարգանալու, կայանալու, զինվելու համար: Նշեց, որ ուրախալի փաստ է, որ հանքը շահագործողը ՀՀ քաղաքացի է:

Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Հ.Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց տիկին Համբարձումյանին, մշտապես աջակցելու, նոր միկրոավտոբուս նվիրելու, ցուցաբերված սրտացավության համար:

Ս.Համբարձումյանը հավաստիացրեց, որ պատրաստ է մշտապես լինել բնակիչների կողքին, օգնել՝ թեթևացնելու նրանց հոգսը:

Քննարկման վերջում ներկաների կողմից հնչեցին գովեստի և շնորհակալական խոսքեր, բարձր ծափահարություններ համայնքի արժանի բարերար Ս.Համբարձումյանի պատվին:

Քանի որ այլ հարցեր, առաջարկություններ, դիտողություններ չհնչեցին Ա.Անտոնյանը շնորհակալություն հայտնեց [illegible] և նիստը համարեց փակված:

Հանրային քննարկման պատասխանատու՝

Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա.Անտոնյան

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝ Ս.Համբարձումյան

Արձանագրող՝ Ն.Մկրտչյան